ԸՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՀԱՅԵՐԻ ՆՈՐ ԽՄԲԵՐԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ ԵՐԵՎԱՆ

Երեկ Երևանի կայարանում նորից աշխույժ նուագեռ էր տիրում։ Արտասահմանյան հայերի երրորդ խմբին դիմավորելու համար այնտեղ էին եկել բազմաթիվ տղամարդիկ, կանայք ու երիտասարդներ։ Հարազատներին դիմավորելու համար կայարան էին եկել նաև մոտիկ շրջաններից շատ աշխատավորներ, ինչպես նաև նախորդ խմբերի հետ եկածները. մայրաքաղաքի պարտեական, սովետական և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները։

Կայարանի շրջակայքում հարյուրավոր ավտոմեքենաներ էին կանգնած, որոնք սպասում էին ժամանածներին նրանց հատկացված բնակարանները տեղափոխելու համար։

Ժամը 12 անց կեսն է։ Լսվում է շոգեքարշի ուժեղ սուլոց։ Բոլորի հայացքները ուղղվում են սեմաֆորի կողմը։ Գնացքը մոտենում է կայարանին։ Շոգեքարշի վրա դրված է ժողովուրդների սիրելի առաջնորդ Գեներալիսիմուս Ստալինի մեծադիր նկարը։ Նրա երկու կողմը ծածանվում են ալ-կարմիր դրոշներ։ Լսվում են Սովետական Հայաստանի Պետական Հիմնի քաղցր հնչյունները։

Մայրաքաղաքի աշխատավորության ներկայացուցիչները բուռն խանդավառությամբ և երկարատև ծափահարություններով են դիմավորում սովետական նոր քաղաքացիներին։

— Բարի գալուստ արտասահմանից վերադարձող մեր հայ եղբայրներին ու քույրերին։

— Կեցցե Սովետական հայրենիքը,— պատասխանում են ժամանած հայերը։

Վագոնների կտուրներին շատ երիտասարդներ թաշկինակները բարձրացրած ուրախ պարում են, իսկ մյուսները նվագում և ծափահարում։ Կայարանում հավաքված աշխատավորները մեծ խանդավառությա՞մբ են ընդունում սովետական այդ նոր քաղաքացիների ելույթը։ Լսվում է նրանց հայրենասիրական ջերմ բացականչությունը.

— Կեցցե՛ հայ ժողովրդի ազատարար հայր Ստալինը։

Ժամանածները սկսում են վագոններից ցած իջնել։ Տեղի են ունենում սրտառուչ տեսարաններ։ Երկար տարիներով իրարից բաժանված հարազատները ջերմորեն գրկախառնվում ու համբուրում են միմյանց։

Մտերմական աշխույժ զրույց է սկսվում նախկին խմբերի հետ եկածների և նոր ժամանած հարազատների միջև։ Ահա բժիշկ Ա. Տեր-Ղուկասյանը գտել է իր բարեկամ դերձակ Անդրանիկ Ալեքսանյանի ընտանիքը։ Նա իր հարազատներին պատմում է սովետական երկրում ապրած իր 22 օրվա կյանքի մասին։

— Այստեղ լուսավորություն կա, դպրոց կա, կուլտուրա կա, քաղաքավարություն կա,— ասում է նա իր հարազատներին,— այստեղ շատ շատ աշխատանք կա։

Գիմելով Ա. Ալեքսանյանի մորը, բժիշկը ավելացնում է.

— Քեզ համար էլ գործ կա այստեղ, տղայիդ համար էլ, աղջիկներիդ համար էլ։ Իսկ այս արևը,— ձեռքը բարձրացնելով դեպի վեր շարունակում է նա,- այս Արևը արդեն Հայաստանի Արևն է, օտար արև չէ։ Առավոտուն, որ կելնես, տարբեր տարբեր անուշահոտություն կառնես։

Լարված աշխատանք է կատարվում արտասահմանից վերադարձող հայերի ընդունման և տեղավորման հանձնաժողովում։ Այնտեղ որոշում են, թե ո՞ւմ ո՞րտեղ և ո՞ր բնակարանում պետք է տեղավորել։ Բերիայի ռայոնի ներկայացուցիչը ահա խնդրում է, որ Միհրան Կարդբուրյանի ընտանիքը թույլ տան իրենք տանելու։ Ալդաիսի պահանջներ են ներկայացնում նաև Կիրովյան, Սպանդարյան և մյուս ռայոնների ներկայացուցիչները։

Բաշխումը ավարտված է։ Կարմիր դրոշներով և բարի գալստի լոզունգներով զարդարված ավտոմեքենաները մոտենում են գնացքին և սկսում ժամանածներին տեղափոխել իրենց նշանակված բնակարանները։

Ավտոմեքենաները նստելով, սովետական նոր քաղաքացիները, ի պատասխան մայրաքաղաքի աշխատավորության ջերմ ընդունելության, բացականչում են.— Մեր ամբողջ ուժերը կնվիրենք սովետական Հայրենիքի ծաղկմանն ու բարգավաճմանը։